Թեմայի վերնագիրը՝	Խաղողի միջվազային տարածության մշակության մեքենայի արտադրական փորձարկումների անցկացում և նախապատրաստում՝ արտադրության մեջ ներդրման համար
Կազմակերպության անվանումը՝	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Թեմայի ղեկավարը՝	Թարվերդյան Արշալույս Պողոսի

Խաղողագործությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության համար ունի ռազմավարական նշանակություն: Այդուհանդերձ, դրա բարձր աշխատատարությունը և մեքենայացման համալիրի բացակայությունը լուրջ խոչընդոտ են հանդիսանում ՀՀ-ում ճյուղի հետագա զարգացման և միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրորակ արտադրանքի ստացման համար:

Հաշվի առնելով միջվազային տարածության մշակության ժամանակակից, համընթաց շարժման գործողության սկզբունքով աշխատող մեքենաների հետագա կատարելագործման սպառված վիճակը՝ առաջարկվում է մշակել ռոտորային սկզբունքով աշխատող ուղղաձիգ պտտման առանցքով միջվազային մշակության մեքենա: